Լեռնուտ

Վարչական ղեկավար՝ Սեդրակ Պողոսյան

Հեռ 094 45 02 47

Մակերես՝ 9կմ^2

Բնակչություն՝ 154

lernut.shirak@mta.gov.am

Գյուղ Գյումրիի տարածաշրջանում, մարզկենտրոնից գտնվում է 12կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Առըխվալի, Արիխվալի, Արիխվալի Երրորդ, Արըխվալի Մյուս, Արըխվալի Նոր, Ֆարմասոնի անվանումները: Լեռնուտ է վերանվանվել 1967 թ-ին:
Գյուղը տեղադրված է Շիրակի լեռնաշղթայի փեշերին, բլրապատ տարածքում՝ ծովի մակարդակից 1830մ բարձրության վրա: Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տնական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 600-700մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստանները: Մոտակայքում ունի աղբյուրներ, որոնք ջրմուղով հասցվում են գյուղ և օգտագործվում որպես խմելու ջուր:
Գյուղի շրջակայքում պահպանվել են հին ամրոց-բերդի ավերակներ, ունի կանգուն եկեղեցի: Բնակչության նախնիների մի մասը 1829-1830թթ գաղթել է Արևմտյան Հայաստանի Խնուսի գավառակից: 1831 թ-ին գյուղն ունեցել է 221, 1897 թ-ին՝ 592, 1926 թ-ին՝ 299, 1939 թ-ին՝ 374, 1959 թ-ին՝ 186, 1979 թ-ին՝ 113 բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 154 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 47%, կանայք՝ 53%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 31%, աշխատունակներ՝ 52%, հետաշխատունակներ՝ 17%: Ունի 36 տնտեսություն: Ունի տարրական դպրոց, բուժկետ, կապի հանգույց:
Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը կաթնամսատու անասնապահությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 137հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 31 և 409 հեկտար: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: Մշակում են հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաներ: Նախկինում զբաղվել են շաքարի ճակնդեղի մշակությամբ, որոնք վերամշակվել է Սպիտակի շաքարի գործարանում: Երկրաշարժի արդյունքում գործարանը հիմնովին ավերվել է և շաքարի ճակնդեղի ցանքերի մակերեսները զգալի կրճատվել են: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Լեռնուտ

Ինդեքս՝ 2622